ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/168

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Վոլտ 1999» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Վոլտ 1999» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կենցաղային տեխնիկայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10033-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 14.06.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/1072-21 գրության հիման վրա, 21.06.2021թ.-ին «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.06.2021թ.-ին:

22.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/168 համարի ծածկագիրը:

30.06.2021թ.-ին և 16.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2021թ.-ին:

2. **<u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 14.06.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/1072-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հունիսի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 15:00-ին տեղի է ունեցել կենցաղային տեխնիկայի ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01018966, հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ավան Թումանյան 12/2, հեռ.՝ +374 93 535556, էլ. փոստի հասցե՝ volt1999llc@gmail.com) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են

անհամապատասխանություններ, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի, թերի է, մասնավորապես՝ 6-րդ չափաբաժնի մասով ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով հզորությունը սառեցման ռեժիմում սահմանվել է նվազագույնը՝ 2,7 կվտ, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ջերմային հզորություն (կվտ): 2.800», սառեցման ռեժիմում հրավերով սահմանվել է նվազագույնը՝ 3,3 կվտ, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Սառեցման հզորություն (կվտ): 2.640», 7-րդ չափաբաժնի մասով ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով հզորությունը սառեցման ռեժիմում սահմանվել է նվազագույնը՝ 3.3 կվտ, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ջերմային հզորություն (կվտ): 3.700», սառեցման ռեժիմում հրավերով սահմանվել է նվազագույնը՝ 3.8 կվտ, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Սառեցման հզորություն (կվտ): 3.520», 8-րդ չափաբաժնի մասով՝ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով հզորությունը սառեցման ռեժիմում սահմանվել է նվազագույնը՝ 5.2 կվտ, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ջերմային հզորություն (կվտ): 5.420», սառեցման ռեժիմում հրավերով սահմանվել է նվազագույնը՝ 5.5 կվտ, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Սառեցման հզորություն (կվտ): 5.280», 12-րդ չափաբաժնի մասով բացակայում է զրոյական խցիկ ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև էներգախնայողության դասը սահմանվել է՝ առնվազն A++, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է A, 14-րդ չափաբաժնի մասով թվային հեռուստատեսության ընդունիչը սհմանվել է DVB-T2-C-S2, իսկ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է DVB-T/T2/S/S2, միաժամանակ բացակայում է տակդիրի վերաբերյալ տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 04.06.2021թ.-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի կողմից 07.04.2021թ.-ին գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ի հայտը 6-8-րդ, 12-րդ և 14-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վոլտ 1999» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վոլտ 1999» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10033-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 07.07.2021թ.-ին ներկայացվելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարությանը 21.06.2021թ. թիվ 26/26-1/10033-2021 գրությունը, որտեղ «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգն է, խնդրում ենք վերանայել որոշ նախապայմաններ.

03.06.2021թ-ին «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ն մասնակցել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 2,6,7,8,9,10,12,14 չափաբաժիններին, որտեղ 6,7,8,12,14 չափաբաժիններում հավելված 1.1-ում անհամապատասխանություններ, որի մասին ծանուցվել է 04.06.2021թ-ին շտկման համար: Օգտվելով համարժեքության սկզբունից, մեր կազամակերպությունը առաջարկել է ապրանքատեսակներ, որոնք համարժեք են մրցույթի պահանջներին: Նաև առկա է հրավերով պահանջված տվյալներից

էլ ավելի հզոր տարբերակներ: Շտկումը չի կատարվել քանի որ տրվել են մեր առաջարկած ապրանքատեսակների փաստացի տեխնիկական բնութագրերը: Դրանց շտկելը կամ փոփոխելը կլիներ տեխնիկական բնութագրի կեղծում և խախտում: Այսպիսով «ՎՈԼՏ 1999» ՍՊԸ-ն հետագա պարզաբանումների համար խնդրում է կազմակերպել հանդիպում և քննարկում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/168 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 27.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Վոլտ 1999» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.06.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ 1.1 հավելվածը, 6-րդ չափաբաժնի մասով թերի է եղել, հրավերով հզորությունը սառեցման ռեժիմում սահմանվել է նվազագույնը՝ 2,7 կվտ, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է «Ջերմային հզորություն (կվտ): 2.800», սառեցման ռեժիմում հրավերով սահմանվել է նվազագույնը՝ 3,3 կվտ, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է «Սառեցման հզորություն (կվտ): 2.640», 7-րդ չափաբաժնի մասով հրավերով հզորությունը սառեցման ռեժիմում սահմանվել է նվազագույնը՝ 3.3 կվտ, իսկ մասնակցի

կողմից ներկայացվել է «Ջերմային հզորություն (կվտ): 3.700», սառեցման ռեժիմում հրավերով սահմանվել է նվազագույնը՝ 3.8 կվտ, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է «Սառեցման հզորություն (կվտ): 3.520», 8-րդ չափաբաժնի մասով հրավերով հզորությունը սառեցման ռեժիմում սահմանվել է նվազագույնը՝ 5.2 կվտ, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է «Ջերմային հզորություն (կվտ): 5.420», սառեցման ռեժիմում հրավերով սահմանվել է նվազագույնը՝ 5.5 կվտ, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է «Սառեցման հզորություն (կվտ): 5.280», 12-րդ չափաբաժնի մասով բացակայում է զրոյական խցիկ ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև էներգախնայողության դասը սահմանվել է՝ առնվազն A++, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է A, 14-րդ չափաբաժնի մասով թվային հեռուստատեսության ընդունիչը սահմանվել է DVB-T2-C-S2, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է DVB-T/T2/S/S2, միաժամանակ բացակայել է տակդիրի վերաբերյալ տեղեկատվությունը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Վոլտ 1999» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 04.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի volt1999llc@gmail.com էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովը 08.06.2021թ.-ին արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և որոշել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10033-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 27.05.2021թ.-ին հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից նույն օրը Մասնակցի էլեկտրոնային փոստի՝ vahe.mkhitaryan.90@mail.ru հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին նույնաբովանդակ ծանուցում:

Հանձնաժողովը 08.06.2021թ.-ին արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և որոշել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ

հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10033-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/168 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վոլտ 1999» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**